

նվիրակութիւնն յետ դարձուցանեն քեզի, ի-
քիսէ խարջ տաս, պէրաթն նորին ձեռքդ
տան, թէ որ հրամանուցդ կամաւն նուիրա-
կութիւնն անոնց թողուս, այս ի. քիսէն ալ
անոնք տան, պէրաթն առանց ըստակի քեզի
նորեն եւ տան ի ձեռքդ: Հէման շուտով ել-
նես հրամայես դաս, զիրա թէ հրամանքդ
դմեղ որ Հինտստան զրկեր էիր, այսչափ
պաղար չէյանք կարնար հաներ: Փառք Այ,
հրամանուցդ սր. աղօթիւքն քան զմեր ու-
ղածն ալ լաւ եղաւ, հէլպէթ հէլպէթ ելնես
դաս, Հոգեւոր Տէր, թէ կամքդ խաղաղու-
թիւն է, չի լինի թէ միտքդ փոխես, թէ չէ
վերջն ալ չար է, բաւ է: Գրեցաւ գիրս Հոկ-
տեմբեր ամսոյն Ժա.ն օրն Երեքշաբթի:

Ապր Ձէլէպի, Տէր Յակոբ, Խոճա Ատոմ,
Խոճա Սահակ, Նէրկիզգատէ, Խոճա Խաչա-
տուր, Խոճա Մխասար, Խոճա Աւաք, Վա-
նեցի Խոճա Ամիրզատէ, Խոճա Յովսէփ:

Թ. 49ա.— ՅԱԿՈԲ ԿԹՂԿՍԻ ՂՐԿԱՄ
ԹՈՒՂԹՆ Է ՈՐ ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՂ-
ՄԱՆԷ ՂՐԿԵՐ Է.—

Յիսուսի Քրիստոսի նուաստ ծառայ Յա-
կոբ Կաթողիկոս ամ. Հայոց՝ առ սրբելիդ
իմ եղիազար Կաթողիկոսդ ողջուն յոյժ տա-
ցի: Քանզի ամենայն բաղձանք ստիպէ,
խնդրէ եւ կարօտանայ առնուլ զլրումն նմին,
զի է բնական, բարոյական ունակութիւն,
որում հետեւեցուցանել անձինք մեր արժան
է եւ հարկ իսկ, զի Ած.ական է սահման եւ
հարկեցուցիչ հրաման, առ որ աշխատեցայ